ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 20

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

ՀԱՍՏԱՏԵԼ ՕՐԱԿԱՐԳ.

1. Արաքսավան համայնքի 2020թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին:

2. Արաքսավան համայնքի ղեկավարի 2020թվականի աշխատավարձի չափի մասին:

3. Արաքսավանի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

4. Արաքսավան համայնքի սեփականություն հանդիսացող միջոցների 2019թվականի գույքագրման թաստաթղթերի հաստատման մասին:

5. Արաքսավան համայնքի 2020թվականի վարչական բյուջեի հաստատման մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 21

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Սահմանել Արաքսավան համայնքի 2020թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչաթերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 22

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի դրույթներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Արաքսավան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը՝ 225000 /երկու հարյուր քսանհինգ հազար/ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 23

ԱՐԱՔՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի դրույթներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Արաքսավանի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 24

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող միջոցների 2019թվականի գույքագրման արդյունքների վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի կողմից կազմված ակտը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 25

ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Արաքսավան համայնքի 2020թվականի վարչական բյուջեն:

1. Համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի եկամտային մասը կազմում է ընդամենը՝ 22506.0 հազ.դրամ, որից՝

1/ Հարկային եկամուտներ 4125.0 հազ. դրամ, այդ թվում՝

ա/ հողի հարկ 2080.0 հազ. դրամ, որից՝

- ֆիզիկական անձանցից 2069.0 հազ. դրամ,

-իրավաբանական անձանցից 11.0 հազ. դրամ:

բ/ գույքահարկ շենքերի և շինությունների 18.0 հազ. դրամ, այդ թվում՝

- ֆիզիկական անձանցից 16.0 հազ. դրամ,

- իրավաբանական անձանցից 2.0 հազ. դրամ:

գ/ գույքահարկ փոխադրամիջոցներից 1988.0 հազ. դրամ:

դ/ տեղական տուփքեր 39.0 հազ. դրամ, որից՝

- շինությունների, շինարարության թույլտվության համար 15.0 հազ. դրամ,

- ծխախոտի վաճառքի թույլտվության համար 12.0 հազ. դրամ,

- խմիչքների իրացման համար 12.0 հազ. դրամ:

2/ Այլ եկամուտներ՝ 2220.0 հազ. դրամ, այդ թվում՝

ա/ գույքի վարձակալությունից մուտքեր 1500.0 հազ. դրամ, որից՝

- վարձակալական հողերի վարձավճարներ 780.0 հազ. դրամ,

- այլ գույքի վարձակալություն720.0 հազ. դրամ:

բ/ վարչական գանձումներ 720.0 հազ.դրամ, այդ թվում՝

- տեղական վճարներ 70.0 հազ. դրամ,

- աղբահանության վճարներ 650.0 հազ. դրամ:

3/ Պաշտոնական դրամաշնորհներ /դոտացիա/ 16161.0 հազ. դրամ:

2. Համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի ծախսային մասը կազմում է 22506.0 հազ. դրամ, որից՝

- Կառավարման մարմնի պահպանում 16125.0 հազ. դրամ, որից՝

4111- Աշխատողների աշխատավարձեր 12270.0 հազ. դրամ,

4112- պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 960.0 հազ. դրամ,

4212- էներգետիկ ծառ. 950.0 հազ. դրամ,

4213- կոմունալ ծառայություն 10.0 հազ. դրամ,

4214- կապի ծառայություն 120.0 հազ. դրամ,

4215- ապահովագրական ծախսեր 30.0 հազ. դրամ,

4221- ներքին գործուղումներ 100.0 հազ. դրամ,

4231- վարչական ծառայություններ 150.0 հազ. դրամ,

4232- համակարգչային ծառայություններ 80.0 հազ. դրամ,

4234- տեղեկատվական ծառայություններ 80.0 հազ. դրամ,

4241- մասնագիտական ծառայություններ 110.0 հազ. դրամ,

4252- մեքենաների և սարք. ընթացիկ նորոգում և պահպանում 200.0 հազ. դրամ,

4261- գրասենյակային նյութեր 450.0 հազ. դրամ,

4264- տրանսպորտային նյութեր 600.0 հազ. դրամ,

4823- պարտադիր վճարներ 15.0 հազ. դրամ,

- **Աղբահանություն և սանիտարական մաքրում 1215.0 հազ. դրամ,**

4111- աշխատավարձ 1090.0 հազ. դրամ,

4264- տրանսպորտայնի նյութեր 100.0 հազ. դրամ,

4823- պարտադիր վճարներ 25.0 հազ. դրամ,

- **Սոցիալապես անապահով անձանց աջակցություն 1300.0 հազ. դրամ,**

4726- հուղարկավորության նպաստներ բյուջեից 300.0 հազ. դրամ,

4729- այլ նպաստներ բյուջեից 1000.0 հազ. դրամ,

- **Հասարակական կազմակերպություններին աջակցություն 80.0 հազ. դրամ,**

4819- նվիրատվություն այլ շահույթ չհետ. կազմակ. 80.0 հազ. դրամ,

- **Մշակութային միջոցառումների իրականացում 360.0 հազ. դրամ,**

4239- ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 60.0 հազ. դրամ,

4269- հատուկ նպատակային այլ նյութեր 300.0 հազ. դրամ,

- **Առողջապահություն /այլ դասերին չպատկանող/ 100.0 հազ. դրամ,**

4639- այլ ընթացիկ դրամաշնորհներ 100.0 հազ. դրամ,

- **Հանրակրթական ուսուցում 150.0 հազ. դրամ,**

4269- հատուկ նպատակային այլ նյութեր 150.0 հազ. դրամ,

- **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 150.0 հազ. դրամ,**

4239- ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 150.0 հազ. դրամ,

- **Գույքի նկատմամբ իրավունքի գրանցման և տեղ. տրամադրում 450.0 հազ. դրամ,**

4241- մասնագիտական ծառայություններ 300.0 հազ. դրամ,

4823- պարտադիր վճարներ 150.0 հազ. դրամ,

- Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերում 300.0 հազ. դրամ,

4213- կոմունալ ծառայություններ 300.0 հազ. դրամ,

- Անասնաբույժի ծառայություններ 610.0 հազ. դրամ,

4111- աշխատավարձ 610.0 հազ. դրամ,

- Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ 50.0 հազ. դրամ,

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ 1616.0 հազ. դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍԱՆՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված

Արաքսավան համայնքի ավագանու

19 դեկտեմբերի 2019 թվականի

թիվ 21-Ն որոշման

Արաքսավան համայնքի 2020թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը

1.Տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը հետևյալն են.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների,

շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ---------- 1500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝----------5500դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ --------- 7500դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ --------10500դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ --------15000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝------- 25000դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ----------1500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -------5500 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ------7500 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -----10500դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝------ 15000դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ------25000դրամ.

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ -----175 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.

9) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ 190 դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ 75 դրամ.

10) Արաքսավան համայնքի անվանում որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման

գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

11) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ:

1-ին կետով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.5 գործակցի կիրառմամբ:

2.Համայնքի տարածքում տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերն են.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել ----------1000 դրամ:

2.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար մասնակիցներից վճար սահմանել ----------2000 դրամ:

3.Շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ համայնքապետարանի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար -------5 000 դրամ:

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ ----------1000 դրամ:

5. Աղբահանության դիմաց վճար սահմանել.

- յուրաքանչյուր բնակչից ամսական 80 դրամ,

-կրթական, մշակութային, առողջապահական շինությունների 1քմ համար ամսական 3 դրամ,

-առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների 1քմ համար ամսական 50 դրամ,

-1 խմ աղբի աղբահանության դիմաց վճար 3000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Արաքսավան համայնքի ավագանու 19.12.2019 թ. թիվ 23 որոշման

2020Թ. ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը - 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ / ՀՀ դրամ /
Համայնքի ղեկավար	1	225 000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	184 000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	165 000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	148 000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Հարկահավաք	1	135 000
Օպերատոր	1	100 000
Խմելու ջրի պոմպակայանի հսկիչ	0.5	45 500
Հավաքարար	0.5	45 500
Անասնաբույժ	0.5	50 000
Աղբատար մեքենայի վարորդ	1	90 000

Համայնքի ղեկավար՝ Ա. Թադևոսյան

Հավելված
Արաքսավան համայնքի ավագանու 19.12.2019թ. թիվ 24 որոշման

ԱՐԱՔՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑՈՒՅԱԿ

ՀՀ	անվանում	քանակը	գինը	գումարը
1.	Վարչական շենք	1	7736107	7736107
2.	Երկաթյա պահարան	1	0	0
3.	Մանկապարտեզի շենք	1	4174070	4174070
4.	Սեյֆ	2	0	0
5.	Էլ.պլիտա	1	0	0
6.	Ծառայողական ավտոմեքենա ԳԱԶ_3110՝ գազաբալոնային համակարգով	1	1	0
7.	Հուշարձան խաչքար	1	1042264	1042264
8.	Աթոռներ մետաղական	20	4888	97760
9.	Գրասենյակային բազկաթոռ	1	23829	23829
10.	Աթոռ կ/փ	2	4583	9165
11.	Գրասեղան	1	12831	12831
12.	Տնօրենի աշխատասեղան/աշխատանքային, դիմադիր,կողադիր սեղաններ, տումբա շարժ./	կոմպ.	51935	51935
13.	Canon LaserBase MP3110 /2011թ./	1	17821	17821
14.	Սառնարան LG-GR242MVF /2013թ./	1	66828	66828
15.	Համակարգիչ, XEROX PHASER 3100 MFP /2013թ./	1	0	0
16.	Դաշնամուր	1	0	0
17.	Համակարգիչ /2014/	1	44807	44807
18.	Օդափոխիչ GWH 12nb /2015թ./	1	152114	152114

19.	UPS Elite 650 PRO /2015թ./	1	10591	10591
20.	Համակարգիչ /2015թ./	1	86355	86355
21.	Փողոցների լուսավորություն /2015թ.,2016թ.,2017թ.,2019թ./	120	18364	2203628
22.	Համակարգչային սարքավորումներ/թաս 60սմ,ցանցային սարք անլար ռոթեր TP-LINK TL WR740 N, Ubiquiti Nanonstation Loco M5GHz/, 2014թ.	1	29677	29677
23.	WI-FI կապի սարք/2016թ./	1	82921	82921
24.	Համակարգիչ /2018թ./	1	248700	248700
25.	Զուգարանակոնք /2019թ./	1	50000	50000
26.	Ջրի բաք /2019թ./	1	60000	60000
27.	Շչակ /U-28/	1		
28.	Շչակ /ԼԴ-800/	1		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹԱԴԵՎՈՍԱՅԱՆ